ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Անահիտ Բաբայանը, Նազիկ Գեվորգյանը, Լիլիթ Ենգիբարյանը, Սեվդին Թեջոյանը, Էդգար Համբարձումյանը, Հրանդ Հարությունյանը, Ռոբերտ Հովսեփյանը, Վարդկես Ղարիբյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Ռոման Ավետիսյան, Բաբկեն Կարապետյան, Դիանա Մկրտչյան, Հարություն Նավասարդյան, Արկադիկ Մկրտչյան, Լիպարիտ Հարությունյան, Գեվորգ Ղամբարյան, Տիգրան Մանուկյան, Սուրեն Նավասարդյան, Աննա Մարգարյան, Ծաղիկ Մելքոնյան, Վիրաբ Սարգսյան, Սերոժ Գեվորգյան, Գրիգոր Միրզոյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Լյուդվիկ Յայլոյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գրապիոն Շառոյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով, և 62-րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2025թվականի փետրվարի 11-ի թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 12-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱ ՀԻՄՆԱՐԿԻ ՎԱՌԵԼԻՔԻ ԾԱԽՍԻ ԱՄՍԱԿԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 42-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի ծառայողական և համայնքապետարանի աշխատակազմին անհատույց օգտագործման տրամադրված ավտոմեքենաների շահահագործման, ինչպես նաև համայնքի ենթակա հիմնարկի վառելիքի ծախսի ամսական չափաքանակները `համաձայն հավելվածի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 13-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 180-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի առաջին մասով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի « Հայաստանի Հանրապետության Խոյ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 180-Ն որոշման մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 14-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի42-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպության նախագահ Էմին Երիցյանի 2025 թվականի հունվարի 10-ի թիվ ԵՆ-1001/0037 գրությունը ,ինչպես նաև Խոյ համայնքի Հայթաղ գյուղի բնակիչ Ֆրիդա Բաղդասարյանի 2025 թվականի փետրվարի 3-ի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի համայնքների միությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի 2025 թվականի տարեկան անդամավճարը՝ 310310 /երեք հարյուր տաս հազար երեք հարյուր տաս/ ՀՀ դրամի չափով:
2. Խոյ համայնքի ղեկավարի օգնական Ֆրիդա Բաղդասարյանին ՝ «Աջակցություն և ուժեղացում. կանանց ֆիզիկական և հոգեբանական ինքնապաշտպանություն»» դրամաշնորհային ծրագրի իրականացման համար հատկացնել 100000/մեկ հարյուր հազար/ՀՀ դրամ գումար:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 15-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԵԼԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու կանոնակարգի 13-րդ գլխի 213-րդ կետը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու անդամին իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց ամսական դրամական փոխհատուցում տրամադրելու մասին.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 26-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու անդամին իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց ամսական դրամական փոխհատուցում տրամադրելու մասին» N 109-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 16-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԵԼԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու կանոնակարգի 1-ին գլխի 11-րդ կետը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու նիստերի անցկացման վայր սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Աղավնատուն գյուղի Ն. Մաթևոսյան պող. 25 հասցեն:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 17-Ա)*

Ավագանու անդամներ

ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՐԱՅՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՅՈՒԴՎԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՍՈՖԻԱ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԱՐՏԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԼԻԶԱ ՌԱՊՅԱՆ

ԻՐԻՆԱ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ԱՐՄԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գրապիոն Շառոյանը